# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՏԵԽՈՍՄԱՐՏ ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022/L-1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Zebra | Zebra | կինեգրամով պաշտպանիչ թաղանթ (L-1) | Zebra | Հավելված 1 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Թափանցիկ հոլոգրամով պաշտպանիչ թաղանթը - օգտագործվում է քարտի դիմային կողմը պաշտպանելու համար: Նախատեսված է պաշտպանել անհատական տվյալները, այդ թվում՝ լուսանկարը, կեղծումից. Երբ փորձում եք հեռացնել թաղանթը այն փչանում է: Ընդ որում, քայքայվում են նաև պաշտպանության ներքոնշյալ բոլոր աստիճանները : Վարորդական վկայականների և տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տպագրման համար պաշտպանիչ հոլոգրաֆիկ թաղանթ Թաղանթի կիրառությունը Պաշտպանիչ թաղանթը բարակ (հաստությունը` < 0.0254մմ), թափանցիկ թաղանթ է, որով լամինացվում է պլաստիկ քարտի դիմերեսը` քարտի անձնավորեցումից հետո: Այսպիսով այն պաշտպանում է անձնավորեցման տվյալները, ներառյալ լուսանկարը` կեղծումից և ավելացնում է քարտի պահպանման ժամկետը: Քարտի վրայից այն հանելու փորձ կատարելիս վնասվում է: Ներառյալ ծառայությունները Հաստատված դիզայնով և պաշտպանիչ թաղանթի տեխնոլգիական միջոցների առկայությամբ: Տեխնիկական տվյալներ Անվանումը □ Պաշտպանիչ հոլոգրաֆիկ թաղանթ Նյութի առանձնահատկությունը □ Թափանցիկ պոլիմերային թաղանթ □ Լամինացիայից հետո թաղանթը վնասվում է քարտի վրայից նրան հանելու փորձ կատարելիս: Չափերը □ Թաղանթը առաքվում է գլանափաթեթով, մեկ գլանափաթեթում առնվազն 625 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | քարտ լամինացնելու թաղանթ:  Գլանափաթեթի չափսերը՝ պայմանավորված տպիչ սարքի տեխնիկական հնարավորությունից լայնությունը 50.8մմ, երկարությունը առնվազն՝ 54.25 մետր  Սոսնձային շերտը ներքին  Օգտագործումը: Քարտային տպիչ Zebra ZXP9 Z94-000C0000EM00-ի համար  Տպագրման տեսակը: Ռետրանսֆեր  Փաթեթավորումը: գործարանային տուփով, տուփի վրա շտրիխ կոդի առկայություն.  Բոլոր գլանակները պարտադիր ունենան rfid պաշտպանիչ կոդով ներկառուցված նշան/չիպ/ Պաշտպանվածության աստիճանի առանձնահատկությունները Matte Holography «Ա» տառը և Հայաստանի քարտեզի մեծ ուրվագիծը պատկերված են որպես ստատիկ փայլատ պատկեր: Black\White Image Switching Սլաքով նշված տեղերում քարտը թեքելու ժամանակ գույնը փոխում է սևից սպիտակի: Kinetic Movement «A» տառի ուրվագծերը ձևը դիտման անկյունը փոխելիս շարժվում է վեր և վար, ձախ և աջ Colorful Nanotext |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | «VALID HOLOGRAM» գունավոր տեքստը սլաքով նշված տեղերում պատկերված է 75 мм և 38 мм բարձրություն ունեցող տառաշարով։ Ավելի փոքր տեքստը կարելի է կարդալ միայն խոշորացույցի և լրացուցիչ լույսի օգնությամբ։ Holographic and Matte Diffraction Զինանշանը արծիվը պարունակում է մի քանի փայլուն և գունավոր մանրամասներ: Առյուծը և ստորև տեղակայված մանրամասները ներկայացվում են դինամիկ փայլատ։ A letter movement «A» տառի ուրվագծերը շարժվում են վեր և վար, երբ թեքվում են հորիզոնական առանցքի երկայնքով, և ձախ ու աջ, երբ թեքվում են ուղղահայաց առանցքի երկայնքով: Morphing Հայաստանի քարտեզի ուրվագիծը հորիզոնական առանցքի երկայնքով թեքվում է ձախ և աջ, իսկ ուղղահայաց առանցքի երկայնքով ուրվագիծը խոշորանում կամ նվազում է: Hidden Image «OK» նշանը կարելի է տեսնել և հաստատել միայն հատուկ լազերային սարքի միջոցով: Առաքման ծավալները Թաղանթը |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՏԵԽՈՍՄԱՐՏ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << Ռ ԵԱՃԱՊՁԲ-2022/L-1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | մատակարարվում է գլանափաթեթներով, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է թափանցիկ թաղանթ առնվազն 625 քարտ միակողմանի լամինացնելու համար ID-1 ֆորմատով, ինչպես նաև պաշտպանիչ ծածկագիր ունեցող RFID-ցուցիչ: Դիմացկունություն, օգտագործման պայմաններ և երաշխիք  Կլիմայական պայմանները փոխադրման ժամանակ՝ Ջերմաստիճանը՝ +4°C-ից – 40°C 65% օդի առավելագույն հարաբերական խոնավության դեպքում: Տվյալ պայմանները պետք է տևեն 12 օրից ոչ ավել: Թաղանթով գլանափաթեթները չպետք է ենթարկվեն անմիջական արևային լույսի ազդեցությանը: Կլիմայական պայմանները պահպանման ժամանակ՝  Պահպանման ջերմաստիճանը: +5°C-ից +20°C 60% օդի առավելագույն հարաբերական խոնավության դեպքում: Թաղանթով գլանափաթեթները չպետք է ենթարկվեն արևային լույսի անմիջական ազդեցությանը, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | խուսափել բարձր ջերմությունից և օդի բարձր խոնավությունից:  Այլ պայմաններ փոխադրման և պահպանման ժամանակ՝  Թաղանթով գլանափաթեթները պետք է լինեն հորիզոնական դիրքով: Գլանափաթեթների շերտերով պահեստավորման առավելագույն բարձրությունը 50սմ: Յուրաքանչյուր շերտի արանքում պետք է լինի ստվարաթղթի միջադիր: Պարտադիր պայման. Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Պարտադիր պայման արտադրված լինի ՀՀ-ն ընդգրկող տարածաշրջանի համար: |